Չափնի

Բնակչություն՝ 77

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 19 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1040 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Չափնի գյուղի մոտ է գտնվում Ընկանանց բնակավայրը, իսկ մոտ 1.5կմ դեպի հյուսիս՝ «Հին Չափնի» բնակատեղին: Չափնիի հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Հիմք ընդունելով, որ Ըրկենանց և Չափնի գյուղերում 1906-12թթ. կառուցվել են եկեղեցիներ, իսկ 1982թ-ին՝ ձիթարան, կարելի է ենթադրել, որ այն հիմնադրվել է 19-րդ դարի երկրորդ կեսին: Մինչև 1939թ. Չափնին և Ըրկենանցը եղել են առանձին բնակավայրեր, որոնցում կազմակերպված էին կոլտնտեսություններ: 1940թ-ից Հին Չափնիի բնակչությունը տեղափոխվում է Ըրկենանց գյուղ, իսկ 1951թ-ին կոլտնտեսությունները միավորվում են, կազմավորվում է առանձին գյուղխորհուրդ:
1959թ-ին գյուղխորհուրդը լուծարվում է, իսկ կոլտնտեսությունը միավորվում Դավիթբեկի կոլտնտեսությանը: 1985թ-ին այն տարանջատվում է Դավիթբեկից և միավոևվում Սևաքարի խորհտնտեսությանը, իսկ Չափնին ներեռվում է Սևաքարի գյուղխորհրդի կազմում: 1991թ-ին, խորհտնտեսության լուծարումից հետո, Չափնին տարանջատվում և կազմավոևում է ինքնուրույն վարչական միավոր՝ Չափնի գյուղխորհուրդը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1048 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 643 հա, որից՝
- վարելահող՝ 88 հա, խոտհարք՝ 35 հա, արոտ՝ 110 հա, այլ հողատեսք՝410 հա
- բնակավայրերի հողեր՝ 29 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 3 հա

- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 6 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 5 հա,
- անտառային հողեր՝ 357 հա, որից անտառածածկ՝ 322 հա
- ջրային հողեր՝ 5 հա